

1967-ի Մայիսի 29-ին

Ծիծեռնակաբերդի բարձունքին հանդիսավոր արարողությամբ բացվեց Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիրը, որն արդարացիորեն համարվում է գլխավորն ու ամենատպալուրիչը բազմաթիվ համանման հուշարձանների շարքում: Հուշահամալիրը կառուցվեց 100 մետրանոց հուշապատով, հավերժության տաճար-դամբարանով, դեպի երկինք խոյացող հուշայուններով:

Տես՝ էջ 2



N 45 (693) 1-7.12.2017



911 Արևմտյան թերթ



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԸ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԸ

Փրկարար ուժեր ՋԱՆՈՒՆ ԱՐԿԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ

Երկրի սահմաններից դուրս փրկարարական աշխատանքներում ՀՀ փրկարար ուժերը կներգրավվեն ոչ թե կառավարության, այլ վարչապետի որոշմամբ: Աժ պետաիրավական և մարդու իրավունքների պաշտպանության մշտական հանձնաժողովը դրական եզրակա-

ցություն տվեց «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքի նախագծին: Ըստ «Արմենպրես»-ի հիմնական զեկուցող, ՀՀ ԱԻ նախարարի տեղակալ Արա Նազարյանը մշել է, որ դրա շնորհիվ կապահով-

վի արձագանքման օպերատիվությունը: Ըստ Արա Նազարյանի՝ նախագծի ընդունումը բխում է նաև որոնողափրկարարական չափանիշներից, քանի որ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման կազմակերպումը կնվազեցնի կորուստները:

Կարևոր

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ



էջ 2

ՆՈՐ ՀԱՍԱՆՐՈՒՄ



էջ 3

ՓՐԿԱՐԱՐ ԼԵՆՆԱԳՆԱՑՆԵՐ



էջ 4

ՍԱՂԱԳՈՎԻՏԻ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԸ



էջ 5



Համագործակցություն ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ...

2017-ի Մայիսի 24-ին Բրյուսելում կայացած Արևելյան գործընկերության 5-րդ զագաթնաժողովում Հայաստանի Հանրապետության, Եվրոպական Միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրա անդամ պետությունների միջև ստորագրվեց «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»: Ստորև ներկայացնում ենք համաձայնագրի քաղաքացիական պաշտպանությանը և աղետների ռիսկի կառավարմանը վերաբերող հատվածները:

Համաձայնագրում նշված է, որ Կողմերը պետք է ակտիվացնեն արտաքին և անվտանգության քաղաքականության, այդ թվում ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության ոլորտում իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կազմա-

կերպություններում և համագործակցության ձևաչափերում իր մասնակցությանը և դրանից բխող իր առկա պարտավորություններին տրվող կարևորությունը, ինչպես նաև պետք է լուծեն, մասնավորապես, հակամարտության կանխարգելման, ճգնաժամի կառավարման, ռիսկի նվազեցման, կիրառելի տեղեկության, անվտանգության ոլորտի բարեփոխման, տարածաշրջանային կայունության, գինաթափման, չտարածման, զենքի վերահսկման և արտահանման վերահսկման հետ կապված կոնկրետ խնդիրներ: Համագործակցությունը պետք է հիմնված լինի ընդհանուր արժեքների և փոխադարձ հետաքրքրությունների վրա և պետք է ուղղված լինի դրա արդյունավետության բարձրացմանը՝ օգտվելով երկկողմ, միջազգային և տարածաշրջանային հարթակներից:

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն շրջակա միջավայրի առնչվող հարցերի շուրջ իրենց հա-

մագործակցությունը՝ դրանով նպաստելով տնտեսության էկոլոգիացման և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի ապահովմանը: Շրջակա միջավայրի ընդլայնված պաշտպանությունից կշահեն Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ու բիզնես գործունեությունները, այդ թվում հանրային առողջության բարելավման, բնական պաշարների պահպանման և տնտեսական ու բնապահպանական արդյունավետության բարելավման, ինչպես նաև առավել կայուն արտադրության կառուցվածքների ապահովմանը նպաստող ժամանակակից, ավելի մաքուր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով: Համագործակցությունը պետք է իրականացվի հաշվի առնելով Կողմերի հավասարության և փոխադարձ օգուտի վրա հիմնված շահերը, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում Կողմերի միջև գոյություն

ունեցող փոխկախվածությունը և այդ ոլորտում գործող բազմակողմ համաձայնագրերը: Համագործակցությունը պետք է նպաստակաուղղված լինի շրջակա միջավայրի պահպանությանը, պաշտպանությանը, բարելավմանը և որակի վերականգնմանը, մարդու առողջության պաշտպանությանը, բնական պաշարների կայուն օգտահանմանը և տարածաշրջանային կան գլոբալ բնապահպանական հիմնախնդիրներին առնչվող միջազգային մակարդակով ձեռնարկվող միջոցառումների խթանմանը, այդ թվում՝ ստորև նշված ոլորտներում՝ ա) բնապահպանական կառավարում, բ) օդի որակ, գ) ջրի որակի և պաշարների կառավարում՝ ներառյալ հեղեղումների ռիսկի կառավարում, ջրի սակավություն ու երաշտներ, դ) թափոնների կառավարում, ե) բնության պաշտպանություն՝ ներառյալ անտառաբուծություն և կենսաբանական բազմազանության պահպանում,

Տես՝ էջ 3



**ԶԵՆՈՒՄ**

Արտակարգ իրավիճակների նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում վթարների դեպքում արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույցի նախագիծ:

**ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ**

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ամփոփել է 2017-ի հոկտեմբերին հանրապետությունում գրանցված արտակարգ դեպքերի ու պատահարների վիճակագրությունը:

Փրկարար ծառայության ստորաբաժանումները հոկտեմբեր ամսին իրականացրել են 1507 ելք՝ 32-ով ավելի, քան 2016-ի հոկտեմբերին: 565 կանչով փրկարարներն արձագանքել են արտակարգ դեպքերի, 633 կենցաղային կանչ, 95 կեղծ ահազանգ, 214 այլ դեպք: Արտակարգ դեպքերից զոհվել է 29 (այդ թվում 7 կին, 2 երեխա), տուժել՝ 940 մարդ (այդ թվում 268 կին և 133 երեխա): Փրկարարները 19 մարդու կյանք են փրկել (2016 թվականի հոկտեմբերին՝ 23):

**Հրդեհ**  
Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է հրդեհի առաջացման վերաբերյալ 468 ահազանգ (2016 թվականի հոկտեմբերին՝ 409 ահազանգ), որից հրդեհ է գրանցվել 302 դեպքում (2016 թվականի հոկտեմբերին՝ 306 դեպք): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հրդեհների քանակը նվազել է 4-ով: 81 դեպքում կեղծ ահազանգ է գրանցվել, 10 դեպքում՝ հսկողությամբ

իրականացվող այրումը հրդեհի տեղ են ընդունել և զանգահարել 911:

Հրդեհներից զոհվել է 1, տուժել՝ 4 մարդ (2016 թվականի հոկտեմբերին՝ 7 զոհ, 2 տուժած): Լյուքսական վնասը՝ 66,57 մլն դրամ՝ 2,7 մլն-ով պակաս, քան 2016-ի հոկտեմբերին:

Հրդեհների մեծ մասը բուսածածկ տարածքներում է գրանցվել: 80: Բացի սրանից՝ կրակի բաժին են դարձել աղբ՝ 44, առանձնատուն՝ 43, բնակելի շենք՝ 41, կրպակ, տրանսպորտային միջոց՝ 33, տնակ, ավտոտնակ՝ 21, պահեստավորված անասնակեր՝ 4 և այլն: Երևանում գրանցվել է 121 հրդեհ, այլ քաղաքներում՝ 177, գյուղերում՝ 104: Ամենաշատ հրդեհներ գրանցվել են Կոտայքի քաղաքներում՝ 16, ամենաքիչը՝ Վայոց ձորի՝ 3: Գյուղերից ամենաշատ հրդեհներ գրանցվել են Գեղարքունիքի գյուղերում՝ 16, ամենաքիչը՝ Շիրակի և Արմավիրի՝ 5-ական:

**Ճանապարհատրանսպորտային պատահար՝ ԾՏՊ**  
Գրանցվել է 403 ԾՏՊ՝ 80-ով ավելի, քան 2016-ի հոկտեմբերին: Չոհվել է 22, տուժել 561 մարդ: 2016 թվականի հոկտեմբերի համեմատ զոհերի քանակը նվազել է



7-ով, տուժածներից աճել 145-ով:

ԾՏՊ-ների գրեթե կեսը՝ 198 դեպք, բախումներն են: 117 դեպք վրաներ, 46 դեպք՝ տրանսպորտային միջոցների շրջում, 42 դեպք՝ այլ բնույթի ԾՏՊ:

**Ուժեղ քամի**  
2017 թվականի հոկտեմբերին գրանցվել է 13 ուժեղ քամի (4 դեպք՝ Գեղարքունիքի, 2-ական դեպք՝ Լոռու, Կոտայքի, Տավուշի, 1-ական դեպք՝ Արագածոտնի, Արմավիրի մարզերում և մայրաքաղաքում): Վնասվել է 32 շինություն, 31 ծառ, 6 էլեկտրական այրւմ, 4 տրանսպորտային միջոց:

**Փլուզում**  
2017 թվականի հոկտեմբեր ամսին հանրապետությունում գրանց-

վել է 11 փլուզում 7-ով ավելի, քան 2016-ի հոկտեմբերին: 3-ական դեպք գրանցվել է մայրաքաղաքում և Գեղարքունիքի մարզում, 2 դեպք՝ Տավուշի, 1-ական դեպք՝ Լոռու, Շիրակի և Վայոց ձորի մարզերում:

Փլուզումներից 9-ը տեղի են ունեցել բնակելի շենքերում, շինություններում, 1-ական դեպք՝ արտադրական օբյեկտում և այլ վայրերում:

**Թունավորում**  
Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 333 թունավորում, զոհվել է 4, տուժել՝ 374 մարդ: 2016 թվականի հոկտեմբերի համեմատ թունավորումների քանակն աճել է 29-ով, տուժածների քանակը՝ 41-ով, զոհերի քանակը չի փոխվել: Թունավորումների հիմնական

պատճառներն են. ալկոհոլ՝ 116, քիմիական նյութեր՝ 65, դեղորայք՝ 40, սննդամթերք՝ 27, շնու գազ՝ 24, կարիճի և սարդի խայթոց՝ 16, մեղվի խայթոց՝ 16, օժի խայթոց՝ 3 և այլն:

Թունավորումների մեծ մասը՝ 239 դեպք, գրանցվել է մայրաքաղաքում: Մարզերից ամենաշատ թունավորումներ գրանցվել են Արմավիրում՝ 29, ամենաքիչը՝ Սյունիքում՝ 3: Վայոց ձորում, Տավուշում թունավորում չի եղել:

**Այլ դեպքեր**  
2017 թվականի հոկտեմբերին գրանցվել է 2 քարաթափում, 1 փլուզված, 1 մերկասառույց, 1 անասնահամաճարակ և այլն: ■

**Հրապարակման պատրաստեց Արամ ԶԱՔԱՐՅԱՆԸ**

ՀՀ ԱԻ նախարարությունը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միասնական պետական քաղաքականության մշակման, իրականացման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների համակարգման և նման հարցերում պետական լիազոր մարմինն է: Միաժամանակ, մեկ անգամ չէ, որ հայտարարվել է՝ աղետների ռիսկի նվազեցում-կառավարումը մեկ գերատեսչության խնդիր չէ: Արտակարգ իրավիճակների նախարարությունը օգնել և օգնում է պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, մասնավոր կառույցներին՝ աղետների ռիսկի նվազեցման կարողությունները զարգացնելու հարցում: ԱԻՆ մասնագետները մշակել և շահագրգիռ կառույցներին են տրամադրել բազմաթիվ ուղեցույցներ, աշխատանքային ծրագրեր: Օրինակ, մշակվել և հրատարակվել է անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների ռիսկի նվազեցման կրթության ուսուցանողների ուսուցման ձեռնարկ, քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ երեք ձեռնարկ բնակչության համար, ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ուղեցույց և այլն: Հիմա էլ արտակարգ իրավիճակների նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում վթարների դեպքում արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույցի նախագիծ:

**ՆՈՐ ՈՒՂԵՅՈՒՅՅ Վասն անվտանգ ընդերքօգտագործման**



յեկտ, պղծամբար, ազդակիր համայնք, շրջակա միջավայր և այլ հասկացություններ:

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում վթարների դեպքում արտակարգ իրավիճակներում գործելու պլանում պետք է ներկայացված լինեն ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի լրիվ ամվանումը, գտնվելու վայրը, տիպը, նախագծային հզորությունը, շահագործման նախագծային ժամկետը, տարողությունը, տարեկան պահվող թափոնների ծավալը և տեսակը, օբյեկտը նախագծող և փորձաքննող կազմակերպությունների տվյալները, վթարի դեպքում խառնուրդի տարածման մակերեսը և հեռավորությունը, աղետի գոտում հայտնվող մարդկանց թվաքանակը և այլն:

Արտակարգ իրավիճակների նախարարությունն առաջարկում է վթարի արձագանքման չորս մակարդակ.

- 1) Դիտում. առկա է կանխատեսվող դեպքեր կամ սպասվող իրավիճակի վաղ նախազգուշացում,
- 2) Պատրաստվածության վիճակ. իրավիճակը՝ իրարությունը բացա-

հայտված է, առկա է վթարի առաջացման վտանգ,

3) Իրականացում. պատվարի ճեղքումը վերահաս է, կամ պատվարը վթարվել է,

4) Արտակարգ իրավիճակի վերացում. դեպքը կասեցվել է, կամ իրականացման փուլն ավարտվել է:

Նախագծի համաձայն արտակարգ իրավիճակների կանխարգելման և (կամ) հետևանքների վերացման դեպքում ընդերքօգտագործողը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ. արտակարգ իրավիճակների, պաշտպանության, առողջապահության, բնապահպանության, գյուղատնտեսության, տարածքային կառավարման և զարգացման, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություններ, կառավարությանը առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ոստիկանություն, մարզպետարաններ, ազդակիր համայնքներ: ■

**Արամ ԶԱՔԱՐՅԱՆ**

**50 ՏԱՐԻ ԱՌԱՅ**

**Սկիզբը՝ էջ 1**  
Հուշապատը պիտի ունենար Ռավելի «Բոլերոյի» երաժշտության մոտիվների մանկան պատկերի վրա խարսխված մոր քանդակ: Պատի երկարությամբ քանդակը պիտի կրկնվեր 111 անգամ: Քանդակում մայրը ղրկապատկերն է, երեխան ամբողջական ապրող ժողովրդի խորհրդանիշ: Երկրաչափության մեջ 111-ը անվերջության, անընդմեջության խորհրդանիշ է: Չուսուրդ սկիզբ, ոչ վերջ: Այսօր պատը կա 111 անգամ կրկնվող քանդակը դեռ սպասում է վարպետի արարմանը:

1964-ին հուշահամալիրն ուներ «Առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ մատակներին նվիրված կոթող» անվանումը, ինչը դարձավ Երկրաչափության մեջ 111-ը անվերջության, անընդմեջության խորհրդանիշ: 1965-ի մարտի 16-ի ՀԽՍՀ նախարարների խորհրդի կարգադրության մեջ հուշարձանը կոչվում է «1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող կոթող»: ■

**ՍԱՆՈՒՑՈՒՄ**

2017 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 14:30-ին, տեղի կունենա ՀՀ ԱԻ նախարարության պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզավորման հանձնաժողովի նիստ (հասցե՝ Երևան, Դավիթբաշեն, 4, Ա. Միկոյան փող. 109/8):

**Օ Ր Ա Վ Ա Ր Գ**

«Հատուկպայթիչ» ԲԲ ընկերության պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման համար տրված լիցենզիայի դադարեցման վերաբերյալ հայտի քննարկում:

**ՀՀ ԱԻ նախարարության պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզավորման հանձնաժողով**



### Հայաստանում վստահ եմ

Ջարգացումը չի կարող լինել կայուն, եթե պայմանավորված չէ աղետների ռիսկի գիտակցմամբ: Հայաստանի և Եվրամիության ստորագրած «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» նույնպես այս տրամաբանության մեջ է:

### Սկզբը՝ 1 էջ

զ) արդյունաբերական աղտոտում և արդյունաբերական վտանգներ,

է) քիմիական նյութերի կառավարում:

Կողմերը պետք է փոխանակեն տեղեկությունները և փորձառությունը, համագործակցեն տարածաշրջանային և միջազգային մակարդակով:

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործընթացում: Համագործակցությունը պետք է իրականացվի հաշվի առնելով Կողմերի հավասարության և փոխադարձ օգուտի վրա հիմնված շահերը, ինչպես նաև այդ ոլորտում երկկողմ և բազմակողմ հանձնառությունների միջև գոյություն ունեցող փոխկախվածությունը:

Համագործակցությունը պետք է խթանի ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակով ձեռնարկվող միջոցառումները կապված

ա) կլիմայի փոփոխության մեղմացման,

բ) կլիմայի փոփոխությանը հարմարեցման,

գ) կլիմայի փոփոխությունը հասցեագրելու շուկայական և ոչ շուկայական մեխանիզմի,

դ) նոր, անվտանգ, կայուն և հարմարեցված նորարարական ցածր ածխածնային տեխնոլոգիաների ուսումնասիրության, մշակման, ցուցադրման, տեղաբաշխման, փոխանցման ու տարածման,

ե) դեպի ընդհանուր և ոլորտային քաղաքականություններ կլիմայի հարցերով դիտարկումների ուղղորդման,

զ) իրագրության բարձրացման, կրթության և վերապատրաստման հետ:

Կողմերը, ի թիվս այլնի, պետք է համագործակցեն իրենց վավերացրած բնապահպանական բազմակողմ այնպիսի համաձայնագրերի մասով, ինչպիսիք են Միա-

## ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ...

### Հայաստան-ԵՄ «Համադարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»

վորված ազգերի կազմակերպության 1992 թվականի՝ կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիան (ՄԱԿ-ի ԿՓՇԿ) և 2015 թվականի Փարիզյան համաձայնագիրը, և անհրաժեշտության դեպքում համատեղ գործունեություն իրականացնեն համապատասխան գործակալությունների շրջանակներում:

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը՝ բնական և տեխնոլոգիա աղետների դեմ պայքարի գործընթացում: Համագործակցությունը պետք է իրականացվի հաշվի առնելով Կողմերի հավասարության և փոխադարձ օգուտի վրա հիմնված շահերը, ինչպես նաև Կողմերի միջև գոյություն ունեցող փոխկախվածությունը և այդ ոլորտում իրականացվող բազմակողմ միջոցառումները:

Համագործակցությունը պետք է ուղղված լինի բնական և տեխնոլոգիա աղետները կանխարգելելու, դրանց նախապատրաստվելու և արձագանքելու գործընթացների բարելավմանը:

Կողմերը, մասնավորապես, երկկողմ հարաբերությունների հիման վրա և (կամ) բազմակողմ ծրագրերի շրջանակներում պետք է փոխանակեն տեղեկություններն ու փորձառությունը և իրականացնեն համատեղ միջոցառումներ: Համագործակցությունը կարող է ընթացում, մասնավորապես, քաղաքացիական պաշտպանության ոլորտում Կողմերի միջև կնքված հատուկ համաձայնագրերի և (կամ) ձեռք բերված վարչական պայմանավորվածությունների իրականացման միջոցով: Կողմերը սույն Համաձայնագրով նախատեսված կամ ծրագրված միջոցառումների համար կարող են համատեղ սահմանել հատուկ ուղեցույցներ և (կամ) աշխատանքային պլաններ:



Համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ նպատակները՝

ա) կոնտակտային մանրամասների փոխանակում և կանոնավոր կերպով դրանց բարձրացում երկխոսության շարունակականությունն ապահովելու և 24-ժամյա ռեժիմով միմյանց հետ կապ հաստատելու նպատակով,

բ) խոշոր արտակարգ իրավիճակների դեպքում փոխադարձ աջակցության խթանում անհրաժեշտության և բավարար ռեսուրսների առկայության դեպքում,

գ) Եվրոպական Միության կամ Հայաստանի Հանրապետության վրա ազդեցություն ունեցող մեծամասշտաբ արտակարգ իրավիճակների վերաբերյալ 24-ժամյա ռեժիմով նախազգուշացումների և թարմացված տեղեկությունների, այդ թվում՝ աջակցության վերաբերյալ պահանջների և առաջարկների փոխանակում,

դ) արտակարգ իրավիճակների դեպքում Կողմերի կողմից այն երրորդ երկրներին աջակցություն տրամադրելու վերաբերյալ տեղեկությունների փոխանակում, որտեղ գործում է ԵՄ Քաղաքացիա-

կան պաշտպանության մեխանիզմը,

ե) հյուրընկալող երկրի աջակցության շուրջ համագործակցություն աջակցություն խնդրելու կամ տրամադրելու դեպքում,

զ) աղետները կանխարգելելու, դրանց նախապատրաստվելու և արձագանքելու ոլորտում լավագույն գործելակերպի և ուղեցույցների փոխանակում,

է) աղետների ռիսկի նվազեցման շուրջ համագործակցություն, որը, մասնավորապես, հասցեագրում է, ինստիտուցիոնալ կապերն ու պաշտպանությունը, տեղեկատվությունը, կրթությունն ու հաղորդակցությունը, և լավագույն գործելակերպը՝ միտված տարերային աղետների ազդեցությունը կանխարգելելու կամ մեղմելուն,

ը) աղետների կառավարման առնչվող վտանգի ու ռիսկի գնահատման և աղետների վերաբերյալ գիտելիքների բազայի կատարելագործման շուրջ համագործակցություն,

թ) շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա աղետների ազդեցության գնահատման շուրջ

համագործակցություն, ժ) քաղաքացիական պաշտպանության հարցերին առնչվող մասնագիտական տեխնիկական աշխատաժողովներին և գիտաժողովներին փորձագետների հրավիրում,

ժա) յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար՝ Եվրոպական Միության և (կամ) Հայաստանի Հանրապետության կողմից կազմակերպվող հատուկ պրակտիկ դասընթացներին և վերապատրաստումներին դիտորդների հրավիրում,

ժբ) քաղաքացիական պաշտպանության առկա հնարավորությունների առավել արդյունավետ կիրառության շուրջ համագործակցության ամրապնդում: ■

### Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

**Խմբ. կողմից.** Հայաստանում վստահ եմ, որ զարգացումը չի կարող լինել կայուն, եթե պայմանավորված չէ աղետների ռիսկի գիտակցմամբ: Հայաստանի և Եվրամիության ստորագրած «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» նույնպես այս տրամաբանության մեջ է: Տարբեր հողածններում մշակում է, որ կողմերը ձգտում են նպաստել և խրախուսել շրջակա միջավայրի համար անվտանգ ապրանքների և ծառայությունների առևտուրը, խրախուսել այնպիսի ապրանքների առևտուրը, որոնք նպաստում են բարելավված սոցիալական պայմանների և շրջակա միջավայրի պահպանությանը, անտառների կայուն կառավարմանը և այլն:

«Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» հիմնարար փաստաթուղթ է: Դրանով նախատեսված բազմաթիվ հարցերի շուրջ կանոնավոր երկխոսություն կկազմակերպվի:

Նոյեմբերի 28-ին ՀՀ ԱԻ նախարարությունում կայացավ քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերին առնչվող սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում էին ՀՀ զբոսաշրջությունների, կրթական հաստատությունների, ինչպես նաև՝ հանձնաժողովների քաղաքացիական պաշտպանության հարցերով պատասխանատուները:

Հանդիպման նպատակն էր քննարկել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստվածությունը, ինչպես նաև՝ տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու սահմանել ծրագրերը:

Սեմինարը համակարգում էր ՀՀ ԱԻՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության պետ, փ/ծ գնդապետ Արտակ Նահապետյանը:

ՀՀ պետական կառավարման մարմինների ՔՊ հարցերով պատասխանատուները ներկայացրեցին ԱԻ և ՔՊ բնագավառում կատարված աշխատանքները՝ նշելով բնագավառի ձեռքբերումները և առկա խնդիրները:

## ՔԱՂՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 2018-ին նախատեսվող միջոցառումները

Սեմինարի ընթացքում քննարկվեցին արտակարգ իրավիճակներում գործելու պլանները, ինչպես նաև՝ ՀՀ պետական կառավարման մարմիններում անցկացված ՔՊ վիճակի համալիր գնահատման արդյունքները:

Հանդիպման մասնակիցները նախանշեցին նաև 2018-ին սպասվող հիմնական միջոցառումները:

Քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսվում է.

- ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից քաղաքացիական պաշտպանության պլանների և տարիանման պլանների ճշգրտում,

- ՀՀ տարածքում առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտում, հնարավորության դեպքում դրանց վերանորոգման աշխատանքների իրականացում և համապատասխան գույքով ու տեխնիկական սարքավորումներով կահավորում,

- Սահմանամերձ համայնքների բնակչության պատսպարման նպատակով համապատասխան շինությունները

թաքստոցների ձևափոխման և նորերի կառուցման պլանավորում,

- Տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման գործընթացների կազմակերպում և իրականացում:

2018 թ. նախատեսվում է կազմակերպել նաև մի շարք ուսումնական վարժանքներ՝ թեմաներն ընտրելով տարածաշրջանի, ինչպես նաև՝ համապատասխան ոլորտի առանձնահատկություններից և առաջադրված խնդիրներից:

Նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են կառավարման մարմիններին և ուժերի պատրաստվածության տարբեր աստիճանների բերմանը, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև՝ ռազմական գործողությունների վարման ընթացքում կամ այդ գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը, կառավարման մարմինների միջև փոխհամագործակցության իրականացմանը: ■

## Նոր համալրում

Գերթվական գույքային համալրումն է ստացել «Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը»: «Կամազ» մակնիշի ամենագնաց հրշեջ-փրկարարական 2 մեքենա, 161 փրկարարական վրան: «Կամազ» մեքենաները կարող են լիցքավորվել մինչև 9 տոննա ջրով, զինված են հատուկ փրկարարական գույքով և նախատեսված են մասնավորապես օդանավակայաններում փրկարարական ու հրդեհաշիջման աշխատանքների համար: Իսկ վրաններից 110-ը կարող են տեղավորել մինչև 10, 51-ը՝ մինչև 30 մարդ:



Ինչպես նախկինում ստացված գույքը, այս խմբաքանակը նույնպես կտրամադրվի ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տարբեր ստորաբաժանումներին:

«Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը» բացվել է 2016-ի մարտի 18-ին՝ ի կատարումն հայ-ռուսական միջկառավարական «Արդյունաբերական վթարների, տարերային աղետների կանխման և դրանց հետևանքների վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի: Փաստաթղթի համաձայն, միայն 2017-ին Ռուսաստանը կենտրոնին է տրամադրելու 16 մլն դոլարի գույք:

Բացի գույքային օժանդակությունից, կենտրոնը ՀՀ ԱԻ նախարարության հետ համատեղ Հայաստանի տարածքի ռիսկերի գնահատում է իրականացնելու: ■

mes.am  
Թեմայի մասին տես նաև էջ 7



Փրկարար լեռնագնացներ

«911.Արտակարգ թերթի» նախորդ համարներից մեկում անդրադարձել էինք Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի և ՀՀ ԱԻՆ համագործակցությանը, որի շնորհիվ կատարվում և փրկարարի որակավորում ունեցող լեռնագնացների թիվը: Օրերս մասնակիցները բարեհաջող համընկել են ֆիզպատրաստության և լեռնափրկարարական նորմատիվները, տեսական հարցաշարը:

ԼԵՌՆԵՐԻՑ ԼԱՎ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ՄԻԱՅՆ ԼԵՌՆԵՐԸ

Խնձր լեռնագնացը միշտ փնտրում է ամենաանճառաշելի լեռը

Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիան ստեղծվել է 2007-ին մի խումբ լեռնագնաց ընկերների կողմից: Փոխնախագահ, մասնագիտությամբ փրկարար Սուրեն Դանիելյանի խոսքով՝ նպատակն էր մեկ հարկի տակ հավաքել պրոֆեսիոնալներին և լեռների սիրահարներին, բանի որ վերջին տարիներին մեծ է լեռնագնացության հանդեպ հետաքրքրությունը: «Չբուսաշրջիկներին գրավում է մեր լեռնային բնությունը: ժայռամագլցման տեսանկյունից հավակնում ենք թոփ 5 պետությունների շարքում լինել. 0-7 բարդության աստիճանի ժայռեր ունենք Արզնիում, Բջնիում, Տաթևի և Նորավանքի տարածքում, Արցախում: Ամենախենթ և ամենապահանջկոտ մագլցողը կարող է գտնել իր քարածայրը»,- վստահեցնում է Սուրենը:



խօսակցության գաղափարը: Փրկարար ծառայության հետ համագործակցությունը երկարամյա պատմություն ունի: Սուրենը մտաբերում է տարիներ առաջ լեռնագնացների 6 հոգանոց թիվն ու հարյուրավոր փրկարարներ անվտանգ դուրս էին բերել Հատիս լեռան ձյունապատ անձավի մեջ հայտնված 10 աշակերտի և ուղեկցորդին. տուժողներ չէին եղել: Սերտ է կապը նաև Արագածի օդերևութաբանական կայանի հետ, որտեղից սովորաբար սկսվում է վերելքը դեպի քառազագաթ լեռը: «Հայաստանի լեռներում վտանգները շատ են՝ զառիթափ լանջեր, ձնահյուսեր, վայրի կենդանիներ, մառախուղ, կայծակ: Գրեթե բոլոր տեղանքներում լինում են ուղեկցորդներ, որոնք կարող են արձագանքել դեպքին մինչ փրկարարների ժամանելը: Համատեղ ջանքերով մենք բավական առաջընթաց ունենք անվտանգության առումով. շատ արշավականներ վերելքից առաջ հաղորդում են երթուղու մանրամասները: Բացի դրանից՝ նախորդ տարվանից երկու կազմակերպություն զծանշում են Հայաստանի լեռնային ճանապարհները թե՛ ինտերնետային քարտեզների, թե՛ բեռտոնե սյուների միջոցով, որոնք համարակալված են և կրում են 911 հեռախոսահամարը»:

Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կետերում թիվ 15 փրկարարական ջոկատի հրամանատար, փժ փոխգնդապետ Սերգեյ Բիծյանը նշում է կամավորական հիմունքներով գործող ցանկացած



հասարակական կազմակերպության հետ աշխատանքը արժագանքումն ավելի արդյունավետ է դարձնում: «Աշխարհում ընդունված է, որ բացի պետական համակարգի աշխատակիցներից՝ արտակարգ իրավիճակների արձագանքմանը մասնակցում են կամավորները: Եթե, օրինակ, երկրաշարժ լինի, մենք կկարողանանք ամբողջ ուժերը կենտրոնացնել փրկման տեղանքներում, իսկ կամավոր լեռնագնացները լեռնափրկարարական աշխատանքներ կկատարեն»,- ասում է հրամանատարը:

Լեռնագնացներն ավելի ճշգրիտ տեղեկություն ունեն լեռների առանձնահատկությունների, եղանակային փոփոխությունների վերաբերյալ: Նրանցից ոմանք եղել են աշխարհի ամենաբարձր գագաթներին և կարող են իրենց փորձը փոխանակել: Բացի դրանից՝ օրինակ, Ալպինիզմի ֆեդերացիան պատրաստակամ է անհրաժեշտության դեպքում տրամադրել իր մեղ մասնագիտական ալպինիստական գործիքներն ու սարքավորումները, որոնք արտակարգ իրավիճակների նախարարությունը չունի: Հավելենք, որ մոտ ժամանակներս որակավորման բնություն կհանձնի ֆեդերացիայի լեռնագնացների երկրորդ խումբը: ■

ԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆ

1. Ֆինանսատնտեսագիտական վարչության (այսուհետ՝ Վարչություն) հաշվապահական հաշվառման բաժնի (այսուհետ՝ Բաժնի) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 21-32-8)

Ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 21-32-9)

Բաժնի պետի հանձնարարությանը մասնակցում է Նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառման գործընթացին և ըստ բյուջետային ծրագրերի հաշվապահական հաշվեկշռի կազմման աշխատանքներին, ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացին՝ բյուջետային ծախսերի գործառնական հոդվածներով: Մասնակցում է Նախարարության ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա ֆինանսական գործունեության ամսական, եռամսյակային, տարեկան հաշվետվությունների կազմման գործընթացին, տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով մասնակցում է ակտիվների, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքագրման, գրանցման և ընդհանրացման աշխատանքներին, սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացված գումարների փոխանցումների աշխատանքներին: Իրականացնում է պաշտոնի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

ամենագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 18.01.2018 թ., ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

2. Ֆինանսատնտեսագիտական վարչության (այսուհետ՝ Վարչություն) հաշվարկային բաժնի (այսուհետ՝ Բաժնի) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 21-32-10)

Բաժնի պետի հանձնարարությանը մասնակցում է Նախարարության աշխատակազմի քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձանց, քաղաքացիական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հաստիքադրույքային մատյանների վարման աշխատանքներին, Նախարարության աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների, գործուղման ծախսերի, այլ տրամաֆերտային վճարների հաշվարկման աշխատանքներին, Նախարարության աշխատակիցներին աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանքների տրամադրման աշխատանքներին: Մասնակցում է համակարգի ամսական և տարեկան վիճակագրական հաշվետվությունների կազմման աշխատանքներին և եկամտային հարկի վերաբերյալ ամսական հաշվետվությունների կազմման աշխատանքներին:

ների կազմման աշխատանքներին: Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 31.01.2018 թ., ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակազմների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,
- նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2) ենթակետում

նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում:

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնները զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ,
- արական սեռի անձինք՝ նաև

գինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակրչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանքը,

- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր (նույնականացման քարտ):

ՀՀ քաղաքացիները մրցութային ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև գինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակրչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 15.12.2017 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Նախարարության աշխատակազմին:

(ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 012 31-78-65, 012 31-78-30)



**Ջոկատի երիտասարդները**

Ջոկատի տղաների հիմնական մասը երիտասարդներ են, հին կորիզից քչերն են մնացել: Աշխատում են գյուղական կյանքի հետ համատեղելով, ապրում ջոկատի ու առօրյա հոգսերով: Տղաները պարբերաբար մասնագիտական դասընթացների են մեկնում, վերապատրաստվում ճգնաժամային կառավարման պետակազմի միջոցով, սովորածը գործնականում կիրառում:

**ԾԱՂԿԱՅՈՒՄԻ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԸ**

**Ցուրտ ու բուր հաղթահարող, հարգանք վայելող**



ենք սպասարկում, մարդկանց մեր ծնագնացով հիվանդանոց տեղափոխում կամ շտապօգնության անձնակազմին հանձնում»,- նշում է Ծաղկահովիտի «Արագած» ՅՓՏ-ի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Արթուր Կարապետյանը: Ջոկատը սպասարկում է 11 հայրենակ և 10 քրդաբնակ գյուղեր: Համայնքներից հրշեջ-փրկարարներին դիմում են ճանապարհատրանսպորտային պատահարների, Արագածում մոլորված տուրիստների կամ գյուղացիների որոնողափրկարարական աշխատանքների, հրդեհների, ծյան մեջ մեքենաների արգելափակման, միջամայնքային ճանապարհների անանցանելիության և այլ դեպքերում: Ջոկատը բաղկացած է 25 հոգուց, աշխատողների գերակշռող մասը Ծաղկահովիտ գյուղից են, հրշեջ-փրկարարներ կան նաև

մեկը գործի չէր ընկնում, սրահում ցուրտ էր, դրսում էլ սաստիկ բուր, մեքենայի միջից երկամյա երեխային գիրկս եմ առել, բաճկոնովս ծածկել, դեմքը դեպի մարմինս պահել, բուրը ճեղքելով 100-150 մ հասցրել մեր մեքենային, մի քանի մետր մաքարեղ, երբ մերոնք իրենց մեքենան գործի են գցել, կրկին վերադարձրել եմ ծնողներին: Ես էլ փորթիկ երեխա ունեի, իմ երեխու պես եմ վերաբերվել»,- հիշողության մեջ վառ պահանքավոր մայր օրվա դեպքն է վերհիշում Գոռը: Փ/ծ սերժանտ անկեղծանուն է՝ անկախ սաստիկ ցրտից ու ճնամածկույթի հաստությունից, աշխատում են առանց թերանալու ու անխտիր օգնության հասնում բոլորին: Գոռը նաև այս սեպտեմբերին ջոկատի տղաների հետ օրեր շարունակ մասնակցել է Բյուրականի անտառի հրդեհի մարման աշխատանքներին: Ծաղկահովիտի փրկարարները ներգրավված էին նաև «Խոսրովի» արգելոցի, Արայի լեռան գոտում բռնկված խոշոր հրդեհների մարման աշխատանքներին: «Չմռան սեզոնին մեր ջոկատը Ապարանի ջոկատի հետ հերթապահում է ձմռանային վրանային շուրջօրյա հենակետում: Սաստիկ ձմաբուր է լինում հասկապես Ծիլքար-Սպիտակ, Ալազյա-Արթիկ, Ալազյա-Ապարան ավտոճանապարհներին: Չյան մեջ արգելափակված մեքենաներն ենք դուրս բերում, մարդկանց տեղափոխում վրան, սնունդ, թեյ հյուրասիրում: 2016-ի դեկտեմբերին Շենկանի գյուղից մեր ՅՓՏ-ի հրամանատարը, ես և առաջին հերթափոխի տղաները հղի կնոջ ենք տեղափոխել Ույա Թագա գյուղի սկզբնամաս: Շտապօգնության մեքենան խցանվել էր ծյան մեջ, քարշակով հանելուց հետո հղի կնոջը հանձնեցինք բուժանձնակազմին»,- նշում է «Արագած» ՅՓՏ-ի հրամանատարի տեղակալ, փ/ծ կապիտան Վարդգես Բոյաջյանը, որը խոստովանում է, որ 2011-ից ջոկատում աշխատանքի անցնելուց հետո սովոր է աշխատել նման պայմաններում: Ինչպես ինքն է ասում «սուրբ պարտականությունը» կատարելիս դժվարությունները սովորական են դառնում և հաղթահարելի: Ջոկատի տղաների հիմնական մասը երիտասարդներ են, հին կորիզից քչերն են մնացել: Աշխատում են գյուղական կյանքի հետ համատեղելով, ապրում ջոկատի ու առօրյա հոգսերով: Տղաները պարբերաբար մասնագիտական դասընթացների են մեկնում, վերապատրաստվում ճգնաժամային կառավարման պետակազմի միջոցով, սովորածը գործնականում կիրառում: Ջոկատը պարբերաբար համալրվում է գույքով, երկու հրշեջ և մեկ փրկարարական մեքենա ունի: Չմաքերի ու առատ ծյան պայմաններում էլ աննազանց «Կուճակ» զուգահեռ գործի են դնում ձմազանցը, որը տարածաշրջանի գյուղերի պայմաններում աշխատելու լավագույն միջոցն է դարձել: Երիտասարդ, պարտաճանաչ կուլտուրային ապրում ու աշխատում է համախմբված, մեկ ընտանիքի պես: Ինչպես փրկարարի համազգեստ կրող տղաներն են ասում մեջք-մեջքի տված, ուրախ ու դժվար պահերը միմյանց հետ կիսելով և գյուղի, տարածաշրջանի բնակչության հարգանքը վայելելով: ■

Գյուղատնտեսական ակադեմիան ավարտելուց հետո ծառայության է անցել ազգային բանակում: Բալախովիտում երկու տարի ծառայելուց հետո 2002-ին վերադարձել է հայրենի գյուղ Ծաղկահովիտ: 2005-ին որպես հրշեջ աշխատանքի է անցել Ծաղկահովիտի «Արագած» հրշեջ-փրկարարական ջոկատում: Երկու տարի հետո պատասխանատու և գործին նվիրված հրշեջին է վստահվել հերթափոխի պետի պաշտոնը: Իսկ 2008-2010-ին նույն ջոկատում արդեն աշխատում էր որպես հրամանատարի տեղակալ, 2010-ից մինչ օրս զբաղեցնում է ջոկատի հրամանատարի պաշտոնը: Արթուր Կարապետյանը բոլորովին վերջերս փոխգնդապետի կոչման է արժանացել: Հպարտությամբ է խոսում ջոկատի մասին, որտեղ գործընկերները գյուղի իր ընկերներն են: Գործընկեր-ընկերական հարաբերություններն էլ ավելի են ամրացնում ու միասնական դարձնում ջոկատը, որտեղ բոլորն ապրում ու աշխատում են միմյանց աջակցելով, մեկ ընտանիքի պես: «2005-ից ծառայում եմ այս համակարգում, երբեք միտք չեմ ունեցել թողնել աշխատանքս, միշտ գոհ եմ եղել թե՛ համակարգից, թե՛ ջոկատից, թե՛ դեկավար կազմից: Առավել պարտավորված և ոգեշնչված ենք ծառայում, երբ զգում ենք, թե փրկարարի համազգեստ կրողներս որքան մեծ հարգանք ենք վայելում գյուղում ու նրա սահմաններից դուրս»,- ընդգծում է Արագածոտնի

**ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ**

**Դժվարին իրավիճակից ելք միշտ կա**

մարզի 21 գյուղական համայնք սպասարկող ջոկատի հրամանատար Արթուր Կարապետյանը: Խստաշունչ ու տևական ձմեռներ անցկացնող Ծաղկահովիտի ջոկատում ամենադժվարին իրավիճակից դուրս գալու ելքը միշտ գտնում են: «Անցած տարի ձմռանը նույնիսկ մինչև -40 աստիճան ցուրտ է զրանցվել մեզ մոտ: Այդ սեզոնին շատ ժամանակ հասցանքի ստանում ենք փակ ճանապարհների ունեցող գյուղերից. հիվանդների, երեխաների, հղի կանանց հիվանդանոց տեղ հասցնելու խնդիր է առաջանում: Մենք ձմազանց ունենք, որն ուղղակի փրկություն է: Իմ մեջ միտք հղացավ պատգարակ-սահնակ պատրաստել, որը, կցելով ձնազանցին, կարողանում ենք մարդկանց տեղափոխել»,- նշում է փ/ծ փոխգնդապետը և պատմում, թե ինչպես տարիներ առաջ այդ եղանակով Սիփան գյուղից Ալազյա գյուղում սպասող շտապօգնության անձնակազմին են հանձնել հիվանդ կնոջն ու իր երեք երեխաներին: «Մայրն ու երկու երեխաները ջերմություն ունեին, փորքն էլ առանց մոր չէր մնում: Մեր ու Ապարանի ՅՓՏ-ի ջոկատի ձմազանցներով նրանց հասցրեցինք բուժանձնակազմին: Սոտ 3 կմ



տեղեց մեզ, օրվա մեծ մասն ու ջոկատի լավ մթնոլորտն իրար հետ ենք կիսում, լավ հրամանատար է, միշտ ուղի ցույց տվող»,- հավելում է տեղակալը: Ծաղկահովիտում մեծացած Արթուրը միայն լավ հիշողություններ է պահպանել մանկությունից: Հայրը Ասատուր Կարապետյանը, որը 11 տարի Արագածի տարածաշրջանի գործադիր կոմիտեի նախագահն է եղել, և շրջվումը աշխատող մայրը՝ Բավական Գրիգորյանը, որոնք համար անհոգ և ուրախ մանկություն են ապահովել: Այժմ նրանք որդու ընտանիքի հետ ապրում են մեկ հարկի տակ՝ Ծաղկահովիտի բազմաբնակարան շենքերից մեկում: Նրանց փոխգնդապետ որդին երկու երեխա ունի՝ 11-ամյա Դավիթը, որը դպրոցում գերազանց է սովորում, և 7-ամյա Նարեն: Նույն գյուղից է նաև Արթուրի կինը՝ Ռուզաննա Տոնոյանը, որը մինչև վեր-



### Արտակարգ ծառայություններ

Մի քուրդ կին թուրքիայում պատմում էր, որ 12 երեխա է ունեցել, որ երբ 6-ը զոհվեց հայրենիքը ունենալու համար, մյուս 6-ն ապրեց այդ հայրենիքում, ժառանգ ունենալով: Դրա համար էլ նրանց հայրենիքը չի քշանում, չի փոքրանում: Երբ չի, ճանաչված պետականությունը չունեն, բայց հայրենիք ունեն էն, որ մենք Արևմտյան Հայաստան ենք կոչում:

# 2017-ի ԱՆՈՍԱԿ ԶՄԵՌԸ ԵՎ ՇՈՎ ԱՍԱԿԸ

### Տարվա եղանակի ամփոփում՝ առաջիկա ծնունդ կամ խառնուրդ

Չորեքշաբթի 31 ԱՄՆ «Հիդրոնետ» ծառայության օդերևութաբանության կենտրոնի պետ Գագիկ Սուրենյանը «Ազդակ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ամփոփեց անցնող տարին և ներկայացրեց առաջիկա ծնունդ կամ խառնուրդները: Ըստ Գագիկ Սուրենյանի՝ ընթացիկ տարին առանձնացավ եղանակակի լինելով պայմանների անոմալիաներով: Առաջին անոմալ երևույթն արձանագրվեց տարեկազմին, երբ հունվար-փետրվարին Արարատյան դաշտում տևական ժամանակ պահպանվում էր մառախուղը և ցածր ջերմային ֆոնը: «Արարատյան դաշտում 60 օր շարունակ սառը օդի լճացում եղավ: Ըստ վիճակագրական տվյալների՝ նման ծնունդներ Արարատյան դաշտում լինում են 50 տարին մեկ անգամ: Այս ծնունդը Արարատյան դաշտում առանձին օրերին կլինի մառախուղ, սառյակ երկարատև սառը օդի լճացում և կայր երկարատևություն չի կանխատեսվում»,- տեղեկացրեց նա: Հունվար-փետրվարին օդի ամսական միջին ջերմաստիճանը ցածր էր նորմայից 8-9 աստիճանով: 2017-ի գարունն անցել է նորմայի սահմաններում, իսկ ահա ամառը՝ հատկապես հուլիս-օգոստոս ամիսները, աչքի ընկան աննախադեպ շոգ եղանակով: Արարատյան դաշտում օդի առավելագույն ջերմաստիճանը 42,6 °C է եղել, երևանում՝ 41,8 °C: «100 տարվա կտրվածքով այս ամառը բացառիկներից էր. գրեթե 13-15 օր երևանում և Արարատյան դաշտում ջերմաստիճանը բարձր էր 40 աստիճանից: Տեղումների քանակը հուլիսին և օգոստոսին խիստ պակաս էր նորմայից, ինչի հետևանքով հանրապետության տարբեր տարածքներում ունեցանք անտառային հրդեհներ, որոնք իրենց ուժգնությամբ, ինտենսիվությամբ, տարածական ընդգրկվածությամբ աննախադեպ էին հանրապետության համար: 2017-ը բացառիկ էր նաև նրանով, որ ցրտահարություն չունեցանք, ինչի շնորհիվ ունեցանք առատ բերք: Այս



տարվա աշնանը գրանցված տեղումների քանակն ու օդի ջերմաստիճանը նորմայի սահմաններում էր»,- տեղեկացրեց «Հիդրոնետ» ծառայության օդերևութաբանության կենտրոնի պետ Գագիկ Սուրենյանը: Իսկ ինչ վերաբերում է այս ծնունդը, ապա դեկտեմբերին, հունվարին և փետրվարին միջին ամսական ջերմաստիճանը և տեղումների քանակը կլինի նորմայի սահմաններում, թեև ժամանակ առ ժամանակ Հայաստանը կհայտնվի ինչպես տաք օդային հոսանքների, այնպես էլ արկտիկական ցուրտ օդային հոսանքների ազդեցության գոտում:

Արարատում, Արմավիրում, Արագածոտնի նախալեռնային գոտիներում, Կոտայքի նախալեռնային գոտիներում և Վայոց ձորի նախալեռնային գոտիներում տաք օդի ներթափանցման դեպքում՝ ցերեկային ժամերին օդի ջերմաստիճանը կարող է հասնել +8...+10 աստիճանի, որը ծնունդ համար բավականին բարձր ցուցանիշ է, բայց որոշ ժամանակահատվածներում՝ արկտիկական ցուրտ օդային զանգվածների ներխուժման դեպքում, գիշերային ժամերին ջերմաստիճանը կիջնի մինչև -22...-24 աստիճան: «Շիրակում, Գեղար-

քունիքում, Արագածոտնի լեռնային գոտիներում, Կոտայքի և Վայոց ձորի լեռնային գոտիներում տաք օդի ներխուժի դեպքում՝ ծնունդ ընթացքում կլինեն ժամանակահատվածներ, որ ցերեկային ջերմաստիճանները կհասնեն մինչև 0...+5 աստիճանի, իսկ արկտիկական ցուրտ ճակատների անցման ժամանակ՝ գիշերային ժամերին կդիտվի մինչև -25...-30 աստիճան ցուրտ: Լոռիում տաք օդի ներխուժի դեպքում՝ ցերեկային ժամերին առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել +5...+10 աստիճանի, իսկ արկտիկական ցուրտ հոսանքների ներթափանցման դեպքում՝ գիշերը կգրանցվի մինչև -22...-27 աստիճան ցուրտ: Տավուշում առանձին օրերին օդի ջերմաստիճանը կբարձրանա +8...+13-ի, իսկ ցուրտ օդի ներխուժի դեպքում՝ գիշերը կհասնի -12...-16 աստիճանի: Սյունիքի մարզն ամենատաքն է: Սյունիքի նախալեռնային գոտիներում՝ ցերեկային ժամերին ջերմաստիճանն առանձին օրերին կհասնի առավելագույնը +2...+7 աստիճանի, հովտային գոտում՝ +10...+14, իսկ արկտիկական ցուրտ օդի ներթափանցման դեպքում՝ հովտային գոտում գիշերային ժամերին կարող է նվազել մինչև -10...-15 աստիճանի, իսկ լեռնային շրջաններում՝ -15...-20 աստիճանի»:

Զմռանը Երևանում ամենատաք օրերին օդի ջերմաստիճանը կհասնի +8...+10 աստիճանի, իսկ ամենացուրտ օրերին ցածրադիր գոտիներում կհասնի -20...-22 աստիճանի, բարձրադիր հատվածներում՝ -11...-13-ի: Ի տարբերություն նախորդ տարվա, երբ նորմայից ցածր տեղումներ էին գրանցվել, այս ծնունդը տեղումների պակաս չի կրի:

Չյան առատ տեղումներ հանրապետության տարածքում դեռևս չեն կանխատեսվում: Դեկտեմբերի 1-5-ը Հայաստանի ամբողջ տարածքում սպասվում է առանց տեղումների եղանակ:

Մերի ՍՈՐՈՍՈՆՅԱՆ

## 4 ՍԵՅՍՄԻԿ ԻՐԱԴՆԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ ԱՄՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայության (ՍՊԾ) սեյսմոլոգիական ցանցի կողմից նոյեմբերի 23-29-ը գրանցված երկրաշարժերից 26-ի համար որոշվել են օջախի հիմնական պարամետրերը:

Տեղի ունեցած սեյսմիկ իրադարձություններից 4-ը գտնվում են Հայաստանի, 2-ն էլ՝ Արցախի տարածքներում (նոյեմբերի 23-ին և 28-ին, ժամը 07:13-ին և 20:57-ին, M=1.4 և M=1.8, Աշոցք գյուղից համապատասխանաբար՝ 8 կմ դեպի հարավ-արևելք և 30 կմ դեպի հյուսիս-արևմուտք, նոյեմբերի 24-ին և 27-ին, ժամը 06:40-ին և 07:27-ին, M=2.2 և 2.3, Մարտակերտ քաղաքից, համապատասխանաբար՝ 11 կմ և 8 կմ դեպի հյուսիս-արևելք, նոյեմբերի 25-ին, ժամը 00:39-ին, M=1.0, Երևան քաղաքից 18 կմ դեպի արևմուտք, նոյեմբերի



28-ին, ժամը 02:19-ին, M=1.3, Սպիտակ քաղաքից 10 կմ դեպի հյուսիս-արևելք):

Ըստ ՍՊԾ գործակալության, տարածաշրջանում 3 բալ և ավելի ուժգնությամբ գրանցվել է 11 երկրաշարժ:

Նոյեմբերի 24-25-ը 3 բալ ուժգնությամբ (2.4, 2.5 և 2.6 մագնիտուդ) երեք երկրաշարժ է տեղի ունեցել Թուրքիայի Վան քաղաքից 40 կմ դեպի հյուսիս-արևելք: Այդ օրերին 3 և 4 բալ ուժգնությամբ (2.4 և 2.9 մագնիտուդ) ևս երկու երկրաշարժ գրանցվել է Ադրբեջանում, Բարդա քաղաքից համապատասխանաբար՝ 21 կմ դեպի հյուսիս-արևմուտք և 18 կմ դեպի արևմուտք:

Նոյեմբերի 24-ին Իրանի խոյ քաղաքից 11 կմ դեպի հարավ-արևելք գտնվող Էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունը 3 բալ էր (2.5 մագնիտուդ), որին նոյեմբերի 28-ին հետևել է 3-4 բալ ուժգնությամբ (2.8 մագնիտուդ) հաջորդ ցնցումը:

Նոյեմբերի 25-ին Իրան-Թուրքիա սահմանային գոտում Սալմաստ քաղաքից 14 կմ դեպի հյուսիս-արևմուտք, գրանցվել է 5 բալ ուժգնությամբ (3.8 մագնիտուդ) ստորգետնյա ցնցում:

Նոյեմբերի 26-28-ը 3 բալ ուժգնությամբ երկրաշարժեր են տեղի ունեցել Ադրբեջան (Նախիջևան)-Իրան սահմանային գոտում՝ Շարուր քաղաքից 20 կմ դեպի հարավ-արևելք (2.4 մագնիտուդ), Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ Սարայ քաղաքից 17 կմ դեպի հարավ-արևելք (2.3 մագնիտուդ) և Ադրբեջանում՝ Աղջաբեղ քաղաքից 38 կմ դեպի հյուսիս-արևմուտք (2.5 մագնիտուդ):

Տարածաշրջանից դուրս 6.0 մագնիտուդով երկրաշարժ է գրանցվել նոյեմբերի 27-ին Պապուա Նոր Գվինեայում՝ Տարոն քաղաքից 25 կմ դեպի հարավ-արևելք: Չոհեր և ավերածություններ չկան:

## ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԾ ԳԱՆԴԻՊԵԼ ԵՔ ԱՐՋԻ

Աշնան արջերը հաճախ են թողնում իրենց ապրելավայրերը և մտնում բնակավայրեր: Ութն արջերի համար կերի բավականին պաշար կա անտառում, բայց նրանք գերադասում են բնակավայրերը, որտեղ կեր գտնելն ավելի հեշտ է: Բնապահպանները կարծում են, որ այդ հարցում իրենց մեղավորությունն ունեն մաս մարդիկ, որոնք սննդի մնացորդները թողնում են բնակավայրերի հարևանությամբ: Ի՞նչ անել, երբ հանդիպել ես արջի:

Ըստ Nat-geo.ru կայքի՝ Ռուսաստանի Պրիմորսկի երկրամասի ԱՆՆ-ի մասնագետները թողարկել են արջերի հարձակումներից խուսափելու և պաշտպանվելու հատուկ առաջարկություններ: Ահա դրանցից մի քանիսը:

Առաջին հերթին պետք է հիշել, որ արջերը նախընտրում են բուսական կերը, նրանց համար համեղ ուտելիք են մս կենդանիները, բայց ոչ մարդը: Եթե արջը հարձակվում է մարդու վրա, ապա դա կենդանու սթրեսի արդյունք է:

Արջին ամենակին հաճելի է, երբ նրան հանկարծակի են բերում: Վախը, անսպասելի արտակարգ իրավիճակին արձագանքը ազդեցիկ են և հարձակումը:

Յետևաբար, անտառում մարդը պետք է բարձրաձայնի իր ներկայության մասին: Անտառում երեխաներին պետք է միշտ տեսադաշտում պահել: Խորհուրդ չի տրվում անտառ տանել չվարժեցված շների, քանի որ նրանք, արջերից վախենալով և փախչելով, գազազած արջին բերում են մարդկանց մոտ: Անտառում պետք է զբոսնել հնարավորինս բաց և ընդարձակ տարածքում և միայն ցերեկային ժամերին: Կարիք չկա ծուկ որսալ այնտեղ, որտեղ արջերն են նախընտրում որսի դուրս գալ: Չափազանց կարևոր է անտառում ուտելիքի մնացորդներ չթողնել: Արջերն իրենց սուր հոտառությամբ հողի տակից էլ գտնում են դրանք:

Արջին հեռվից տեսնելիս պետք է հնարավորինս զգույշ ու



դանդաղ նահանջել՝ առանց նրան մեջքով շրջվելու, կորչել արջի տեսադաշտից: Իսկ եթե արջի հետ հանդիպում, այնուամենայնիվ, տեղի է ունեցել, ապա կենդանուն պետք է վախեցնել զանգակի, մետաղական իրերի զնգոցով, գոռալով, ոտքերը գետնին ուժգին դրվելով: Եղել են դեպքեր, երբ հաջողվել է արջին վախեցնել բջջային հեռախոսի բարձր երաժշտության շնորհիվ: Իսկ

եթե հարկ կա արջին կրակոցով վախեցնել, ապա չպետք է կրակել ուղիղ նրա վրա, վիրավոր արջն առավել վտանգավոր է դառնում:

Իսկ հիմա ամենավավ խորհուրդը պետք է խուսափել արջի հետ հանդիպումից, քանի որ մոտակայքում անպայման մեկ այլ արջ է թափառում:

Պատրաստեց Մ. ՍՈՐՈՍՈՆՅԱՆԸ



Մերոնք՝ միջազգային սեմինարին

Նոյեմբերի 23-ին և 24-ին Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում անցկացված քաղաքացիական պաշտպանության ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների երկրորդ միջազգային սեմինարին մասնակցել է նաև ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի Ղեկավար կազմի որակավորման բարձրագույն ֆակուլտետի ղեկավար Դավիթ Թադևոսյանը:

Ինչպես տեղեկացրել էինք մեր թերթի մախորդ համարում, Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ICDO) նախածնունդային նյութերի 23-ին և 24-ին Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում անցկացված քաղաքացիական պաշտպանության ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների երկրորդ միջազգային սեմինարը:

Սեմինարին մասնակցել է նաև ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի Ղեկավար կազմի որակավորման բարձրագույն ֆակուլտետի ղեկավար Դավիթ Թադևոսյանը: Հավաքի նպատակներն էին աղետներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում կադրերի վերապատրաստման ազգային համակարգերի կատարելագործում, առաջավոր ուսումնամեթոդական և դասավանդման նոր մոտեցումների, նորարարական տեխնոլոգիաների ներդրում, կադրերի վերապատրաստման ոլորտում միջազգային համագործակցության և Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության դերակատարության բարձրացում, կրթական ծրագրերի կատարելագործում: Մասնակցել է 16 երկիր: Հայաստան, Տաջիկստան, Ղրղզստան, Ռուսաստան, Քուվեյթ, Ուզբեկստան, Ալժիր, Թունիս, Բելառուս, Ղազախստան, Սերբիա, Սաուդյան Արաբիա, Հարավային Կորեա, Հորդանան, Եգիպտոս, Ադրբեյջան: Երկու օրում ներկայացվել է ավելի քան 10 զեկույց: «Բազմատարբերակ ծրագրեր

ՔՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Կասիմանովեն քաղաքացիական տաշտոյանություն դասավանդող մասնագետների մերկայացվող միասնական տահանջներ



բնակչության և տարածքների պաշտպանության և արտակարգ իրավիճակների ոլորտում», «Բնակչության պաշտպանության ոլորտի շարժումակ խմբերի համար դասընթացավորներին ներկայացվող ընդհանուր պահանջներ», «Բնակչության և տարածքների պաշտպանության ոլորտի շարժումակ խմբերի նյութատեխնիկական ապահովման հարցեր», «Լեռնափրկարարների պատրաստման միասնական չափանիշներ», «Կադրերի վերապատրաստման միասնական չափանիշներ» և այլն: Դավիթ Թադևոսյանի խոսքով՝ հավաքի վերջում արձանագրվել է, որ զեկույցներում ներկայացված մոտեցումները կդառնան Քաղաքացիական պաշտպանու-

թյան միջազգային կազմակերպության անդամ երկրների քաղաքացիական պաշտպանության ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի մշակման հիմք և կախված աղետի բնույթից և երկրի քաղաքացիական պաշտպանության կառուցվածքից, կիրականացվի համապատասխան գործողություն: Սեմինարի արդյունքում սահմանվել են հետևյալ թիրախները. մշակել քաղաքացիական պաշտպանության մասնագետների որակավորման բարձրագույն բազմատարբերակ կրթական ծրագրեր, ընդունել բնակչության և տարածքների պաշտպանության շարժումակ խմբեր կրթող մասնագետներին ներկայացվող միասնական պահանջներ, միջազգային վերա-



The Second International Workshop of the Representatives of Educational Institutions of the ICDO Member States

պատրաստում անցած քաղաքացիական պաշտպանության մասնագետների համար սահմանել Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության միասնական վկայագիր: Այս ամենը պետք է կյանքի կոչվի մինչև 2018 թվականի մարտ, որից հետո կկազմակերպվեն Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության անդամ երկրների ներկայացուցիչների հանդիպումներ, այդ թվում առցանց՝ տեսակապով քննարկումներ: Դավիթ Թադևոսյանից տեղեկացանք, որ Քաղաքացիական պաշտպանության մասնագետների կրթության համաշխարհային ցանցի կատարելագործման համար որոշվել է կազմել Քաղաքացիական պաշտպանության միջազ-

գային կազմակերպության վերապատրաստման դասընթացներն ավարտած և վկայագիր ստացած դասավանդող-ուսուցանողների տվյալների միասնական շտեմարան, աջակցել և խրախուսել քաղաքացիական պաշտպանության ոլորտում գիտահետազոտական աշխատանքները, Քաղաքացիական պաշտպանության միջազգային ակադեմիայի կայքում տեղադրել կրթական և մեթոդական նյութեր, Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության համակարգման և մոնիթորինգի կենտրոնի ուժերով հրապարակել աշխարհում տեղի ունեցած աղետների վերաբերյալ ամսական և եռամսյակային զեկույցներ: ■

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

Հորդառատ անձրևների և ձնհալքի հետևանքով առաջանում են մակերեսային հոսքաջրեր, որոնք բնակավայրերում արտակարգ իրավիճակներ են առաջացնում: սողանքներ, փլուզումներ, հողային էրոզիաներ և այլն: Արդյունքում բնակավայրերը լցվում են ջրով և ջրաբերուկներով, առաջանում են էկոլոգիական լուրջ խնդիրներ: Այս աշխատության հեղինակներն ուսումնասիրել են մակերևութային հոսքաջրերով պայմանավորված արտակարգ իրավիճակները Լոռու մարզի Վանաձոր քաղաքի օրինակով: Վանաձորը Քաղաքի և Տանձուտ գետերի միախառնման վայրում է, շրջապատված է լեռնալանջերով: Ուսումնասիրվել են քաղաքի Ջաքարյան, Չուխաջյան, Սալաթ-Նովա, Կանո, Եղթուն, Աբովյան փողոցները, որոնք գտնվում են տարբեր թաղամասերում և հարում են լեռնալանջերին: Վերջին 7 տարում ամենից շատ ջրաբերուկներ քաղաք ներթափանցել են 2013 թվականին, սակայն, ըստ տարիների, աստիճանաբար այն պակասում է, ինչը արդյունք է հատված անտառների արհեստական և բնական վերականգնման: Հոսքաջրերը ներծծվում են հողի մեջ, արդյունքում պակասում է հողերի էրոզիան: Սակայն 1991-ից սկսված ոչ պլանային զանգվածային անօրինական անտառահատումները դեռ շարունակվում են: Ձուլը գոլորշիանալուց հետո տիրվող սուտում է փողոցներում և տրանսպորտի ու

ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ

«Զրային» արտակարգ իրավիճակներ՝ Վանաձորում

քանու միջոցով բարձրանում, կեղտոտում օդը, որը բացասական է ազդում բնակչության առողջության վրա: Փոշու հետ օդ են բարձրանում նաև տարբեր հիվանդությունների հարուցիչներ: Փոշու առավելագույն ֆոնային կոնցենտրացիաներ նկատվում են տարվա այն ամիսներին, երբ անձրևներից հետո չորանում է քաղաք ներթափանցած տիրվող՝ հունիս-օգոստոս հատվածում: Քաղաքում փոշու աղբյուր է նաև անձրևներից հետո և ձյան հալոցքի ջրի հետ փողոցի մերկ զազոններից փողոց թափվող հողը: Ձնհալի և անձրևաջրերի հետևանքով գոյացող մակերևութային հոսքաջրերով Վանաձոր քաղաքի շրջակայքի հողերի էրոզիայի արդյունքում քաղաքի նշված փողոցներ է թափանցել տարեկան 14-22 տոննա հող: Բնականաբար ամբողջ քաղաք հարյուրավոր անգամ ավելի: Քաղաք ներթափանցած ջրաբերուկներում հայտնաբերվել է մշակովի և վայրի 41 բուսատեսակ, սնկերի մնացորդներ: Քաղաք ներթափանցած ջրաբերուկների հետևանքով հաճախ խցանվում են սելավատարները, դիտահորերը լցվում են տիրվող, ստեղծվում է հակասամիտարական վիճակ: Բնակավայր ներթափանցած հողը



մաքրելու և տեղափոխելու, ինչպես նաև կոյուղուց և սելավատարներից տիրվող հեռացնելու համար առաջանում են լուրջ դժվարություններ և նոր խնդիրներ, քանի որ հաճախակի պետք է մաքրվեն դիտահորերը, ինչի համար պահանջվում են ֆինանսական միջոցներ և տեխնիկա: Հողի էրոզիան ազդում է քաղաքով հոսող գետերի ջրի որակի վրա: Յուրաքանչյուր ամառ քաղաքով հոսող գետերը տանում են 562-721 հազար տոննա հող, ինչը հանգեցնում է բնական լանդշաֆտի խոցելիության մակարդակի բարձրացմանը: Վանաձորում սելավներ լինում

են առավելապես Տանձուտ գետի վարարման հետևանքով: Իսկ սողանքներ արձանագրվում են հատկապես Լոռի-Փամբակ-Աղստև-Տավուշ շրջանների խոշոր գետերի և Փամբակի հովիտներում: Լոռու մարզում 1900 հա տարածք սողանքավտանգ գոտի է: Լոռու մարզում սողանքների առաջացման հիմնական պատճառը անտառահատումներն են: Վերջին տասը տարում մարզի 100 000 հեկտարից հատվել է 30 000-ը: 10 000-12 000 հա անտառ իսպառ բնազնջվել է, և այժմ այդ տարածքները սողանքային օջախներ են: Ուսումնասիրության արդյուն-

քում ձևավորվել են հետևյալ առաջարկները: 1. Անտառահատված տարածքներում հնարավորինս արագ վերականգնել անտառը, նպաստել անտառի բնական վերածին և վերականգնմանը, ուղղորդել հոսքաջրերը, լանջերի ստորին հատվածներում անցկացնել բաց դրենաժներ, որպեսզի հոսքաջրերը բնակավայրեր չթափանցեն: 2. Խիստ արտահայտված թեքությունների վրա ցանցել բազմաձյա խոտաբույսեր, ստեղծել կանաչ գոտիներ: 3. Նոր բնակավայրեր հիմնելիս, կոյուղու և սելավատարների մախագծերը կազմելիս, հաշվի առնել հողային էրոզիայի էկոլոգիական խնդիրները: ■ Հրապարակումը պատրաստվել է Վանաձորի պետական համալսարանի դասախոսներ Ռաֆիկ ԵՂՅԱՆԻ, Լիլիա ԲԱՅՐԱՄՅԱՆԻ, Սերգեյ ԶԱԼԻՆՅԱՆԻ «Մակերեսային հոսքաջրերով պայմանավորված արտակարգ իրավիճակները և դրանց խնդիրները բնակավայրերում» զեկույցի հիման վրա: Զեկույցը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:



**Մրտի կեսը՝ Հայաստանում**

Չին դերասան, Հարվարդի ուսանող Մայքլ Ջոն «Լավաշ մարտահրավեր» է սկսել «Ֆեյսբուքի» իր էջում: «Իմ մրտի կեսը Հայաստանում է», գրել է դերասանը, որն ամիսներ առաջ այցելել էր Հայաստան, և հավելել՝ մարտահրավերն ընդունողը, պետք է իր տարածած 2 թուպե տևողությամբ տեսանյութը դիտելով, մի ամբողջ լավաշ ուտի, նկարահանի, տարածի «Ֆեյսբուքում»: Նշելով իրեն ու ևս 5 ընկերների: Տեսանյութում դերասանը լավաշ է ուտում ու հայերեն երգում:

*Lavash challenge*  
**8**

**Օգնում են փրկարարները**

**Աղվես Չարենցի փողոցում**

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 300 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա Ջուր», էլ-ցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանձաբուժան ծառայություն, ոստիկանություն և այլն:



Փրկարարները 50 հրդեհ, այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պողոտա և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 100 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաբաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու, բնակարան բարձրացնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչներ են սպասարկել երևանի Աջափնյակ, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ, Կենտրոն, Արարիկի վարչական շրջանների և Արարատի փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր,

վերելակի հորան, նկուղ, տանիք, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: Տարբեր տարածքներում արգելափակված մի շարք մեքենաներ են դուրս բերվել երթևեկի հատված:

**Այլ կանչեր.** Կենտրոնի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Չարենցի փողոցի շենքերից մեկի մոտ աղվես կա: Փրկարարները աղվեսին բռնել և տեղափոխել են անվտանգ տարածք: Գեղարքունիքի փրկարարները գիշերն ահազանգ են ստացել, թե Սևան-Գավառ ճանապարհի Չկալովկա գյուղի սկզբնամասում ավտոմեքենա է խափանվել: Հրշեջ-փրկարարները վարորդին և ուղևորին տեղափոխել են թիվ 32 ՀՓՏ:

**Իմացիր և օգնիր**

**ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Այրվածքներ**

**Էլեկտրական այրվածք**  
Էլեկտրական այրվածքներն առաջանում են, երբ էլեկտրական հոսանքն անցնում է մարդու մարմնով վնասելով մաշկը, փափուկ հյուսվածքները և ներքին օրգանները: Մաշկն էլեկտրականության հանդեպ օժտված է որոշակի դիմադրությամբ, որի շնորհիվ մաշկը

և ցավոտ: Բաց գույնի մաշկ ունեցող մարդիկ ավելի արագ են ստանում արևային այրվածքներ, քան մուգ մաշկ ունեցողները: Առօրյա կյանքում մարդիկ հազվադեպ են ենթարկվում այլ տիպի ճառագայթների ազդեցության:

Նման այրվածքի դեպքում հնարավորինս արագ դադարեցրեք ճառագայթումը: Արևային այրվածքների դեպքում տեղափոխեք տուժածին սովորական տեղ կամ ծածկեք մարմինը գործվածքով (հագուստ, սրբիչ և այլն):

Այրվածքներ ստացած տուժածին օգնություն ցուցաբերելիս կարևոր է ապահովել անվտանգությունը, քանի որ այրվածք առա-



կով անցնող էլեկտրական էներգիան վերածվում է ջերմայինի և առաջացնում այրվածքներ: Էլեկտրական այրվածքները հիմնականում խորն են և տուժածի մարմնի վրա տեղակայվում են հոսանքի մուտքի և ելքի տեղերում: Նման այրվածքի դեպքում անջատեք էլեկտրական հոսանքի աղբյուրը: Մի դիպք էլեկտրահարված տուժածին, մինչև էլեկտրականությունը չանջատվի:

**Ճառագայթային այրվածք**  
Ճառագայթային այրվածքներն ավելի հաճախ առաջանում են արևի ճառագայթներից և նման են ջերմային այրվածքներին: Սովորաբար նրանք մակերեսային են, տարածում

ջացնող գործոնը կարող է վնասել ձեզ և շրջապատի մարդկանց: Կատարեք հետևյալ գործողությունները.

- Դադարեցրեք այրվածք առաջացնող գործոնի ազդեցությունը:
- Սառեցրեք այրված մակերեսը:
- Նվազեցրեք վարակի մերթափանցումը:
- Ձեռնարկեք շոկի զարգացումը կանխարգելիչ բաշխելով:
- Ահազանգեք շտապօգնություն, վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և դրանք փոխանցեք դեպքի վայր արագ արձագանքման ծառայությունների մերկայացուցիչներին:

**ԳՐԵՄՄԻ**

**Երկու անվանակարգերում**



Աշխարհահռչակ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանն առաջադրված է «Գրեմմի» մրցանակաբաշխությանը: Մեծ հայրորդու «Ռեքվիեմը» ներկայացված է «Լավագույն երգչախմբային ներկայացում» և «Լավագույն ժամանակակից դասական ստեղծագործություն» անվանակարգերում: «Գրեմմի» է առաջադրված նաև Տիգրան Մանսուրյանի պրոդյուսեր Մանֆրեդ Այխերը՝ որպես «Տարվա պրոդյուսեր դասական ոճում»: Այս մասին հայտնում է «Գրեմմի» պաշտոնական կայքը: «Գրեմմի» 60-րդ մրցանակաբաշխությունը կկայանա Նյու Յորքում հունվարի 28-ին:

**ԱՌՋԵՎՈՒՄ ՈՍԿԵ ՄԵՂԱՆ Է**



Չյուդոյի Հայաստանի մեծահասակների առաջնությունում Հայաստանի ծյուդոյի հավաքականի անդամ, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի քոլեջի մենեջմենթի բաժնի 3-րդ կուրսի 17-ամյա ուսանող Էրիկ-Գոռ Համ-գոյանը, գերծանր քաշային կարգում զբաղեցնելով 3-րդ հորիզոնականը, նվաճել է բրոնզե մեդալ: «Քանի որ տարիքով փոքր եմ, դեռ 18 տարիս չի լրացել, ֆեդերացիայի թույլտվությամբ եմ մասնակցել առաջնությանը: Ես անգամ երիտասարդական հավաքականում ընդգրկված չեմ, որ մինչև 21 տարեկաններն են, և միանգամից մասնակցեցի մեծահասակների առաջնությանը: Ավելի հասուն և ուժեղ էիմ իմ մրցակիցները, բոլորն էլ ինձանից քաշով ծանր էին, բայց կարողացա բրոնզե մեդալ նվաճել, ինչի համար շատ ուրախ եմ», պատմում է պատանի ուսանող-մարզիկը: Մրցե-

լույթները մեկնարկել են նոյեմբերի 25-ին Երևանի խուլուհամրերի մարզապալատի դահլիճում: Իսկ մոտ մեկ ամիս առաջ պատանի ուսանողը, մասնակցելով ծյուդոյի պատանիների միջազգային մրցաշարին, որտեղ մրցում էին մարզիկներ 5 երկրներից, նույնպես զբաղեցրել էր 3-րդ հորիզոնականը: Փետրվարին էլ նվաճել էր մինչև 18 տարեկանների Հայաստանի ծյուդոյի առաջնության չեմպիոնի կոչումը: Էրիկ-Գոռի մարզիչներն են սպորտի վարպետներ Գագիկ Դաբաթյանը և Գագիկ Աղամալյանը: «Պետք է ավելի շատ աշխատեմ, որպեսզի կարողանամ մյուս տարի մեծահասակների առաջնությունում ոսկե մեդալ նվաճել», սեփական ուժերին վստահ ասում է 17-ամյա ուսանող-մարզիկը:

**Ֆելիքս ԵՂԻԱՋԱՐՅԱՆ**

**Մեքենա վարելիս մի՛ խոսիր**

Փորձագետների ուսումնասիրություններով պարզվել է, որ ավտոմեքենա վարելիս բջջային հեռախոսով խոսելն առնվազն կրկնակի մեծացնում է վթարի հնարավորությունը: Օրենքը պարտադրում է մեքենա վարելիս օգտվել «առանց ձեռքի» համակարգերից: Սակայն մասնագետների պնդումներով՝ նույնիսկ այդ «անվտանգ» հեռախոսով զրուցելը կարող է բերել անցանկալի միջադեպերի: Խնդիրն այն է, որ կոնկրետ զրույցն է շեղում վարորդի ուշադրությունը, ոչ թե խոսակցողից օգտվելն ու ձեռքերի զբաղվածությունը: Հիշեցնենք, որ վարորդների կողմից ռադիոկապից և հետախոսակապից օգտվելու կանոնները խախտելը տուգանվում է: